Հավելված 6
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6 »* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-2

ք. Գավառ «26» 02 2020 թ.

<<Գավառի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Կարապետյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ-ն , ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Scanned with CamScanner

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Scanned with CamScanner

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պաշտպանվածությունները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5585664.60 / հինգ միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսունչորս դրամ վաթսուն լումա/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

Scanned with CamScanner

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Scanned with CamScanner

8.11 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող էլեկտրոնային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը։ Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակումը կատարելու օրվանից։ Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկատվական հրապարակումից բացի Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին։

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ։ Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով։ Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում։ Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կնքելիս, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները։ Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օվա ընթացքում։ Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է։[24]

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | <<Նատալի ֆարմ>> |
| Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21 | ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2 |
| /0264/ 2-33-53 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| <<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ | Հ/Հ 1570005065330100 |
| Գեղարքունիք մ/6 | ՀՎՀՀ 01222567 |
| 220085140329000 | Էլ. հասցեն՝ nataliphrm@bk.ru |
| 08417304 | Հեռ. (010)744212 |
| Տնօրեն՝ Ա. Կարապետյան | գլխավոր տնօրեն Ա. Աղաջանյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[24] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով։ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա։

Scanned with CamScanner

Հավելված N 1
« 26 » 02 20 20 թ. կնքված
ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6 -2 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը *** |
| 4 | 33611240/501 | Ածուխ ակտիվացված | Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԸ | ածուխ ակտիվացվածactivated charcoalդեղահատեր250մգ. ստրիպում (10)¶ | հատ | 1,78 | 2314 | 1300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | Ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնում մատակարարել ավելի շուտ |
| 5 | 33691185/501 | Ակտովեգին | Տակեդա Ավստրիա | հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ լուծույթ ներարկման 40մգ/մլ,2մլ ամպուլներ,բլիստերում (25/5x5/) | հատ | 480 | 1680000 | 3500 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 15 | 33661119/502 | Անալգին | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում)լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 500մգ/մլ,2մլ ամպուլներ (10) | հատ | 39 | 249600 | 6400 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ. | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | | |
| 18 | 33611350/502 | ասկորբինաթթու 50մգ/մլ, 2մլ | Երևանի Քիմիադեղագործա-կան Ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճա | ասկորբինաթթուascorbic acidլուծույթ ներարկման5%,2մլ ամպուլներ (10) | հատ | 26 | 46800 | 1800 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 27 | 33691176/507 | Բերոդուալ | Բերինգեր Ինգելհայմ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ | իպրատրոպիում բրոմիդ ,ֆենոտերոլի հիդրոբրոմիդ 261մկգ/մլ+500մկգ/մլ լուծույթ ինհալացիայի համար 20մլ ապակյա տարա | հատ | 3250 | 48750 | 15 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 30 | 33651123/501 | Բիոտակսիմ | Բիոսինթեզ ԲԲԸ | ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում) cefotaxime (cefotaxime sodium)դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի1000մգ, 10մլ ապակե սրվակ(1) | հատ | 195 | 390000 | 2000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 31 | 33621720/501 | Բիպրոլ | Մակիզ-Ֆարմա ՍՊԸ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)bisoprolol (bisoprolol fumarate)դեղահատեր թաղանթապատ5մգ,բլիստերում (30/3x10/) | հատ | 6,78 | 28476 | 4200 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | 33691811/501 | բիսակոդիլ 10մգ | Լեկխիմ-Խարկով ԲԸ | բիսակոդիլ bisacodyl մոմիկներ ուղիղաղիքային 10մգ, բլիստերում (10/2x5/) | հատ | 49,6 | 14880 | 300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 35 | 33671123/501 | Բրոնխոլիտին | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | գլաուցին (գլաուցինի հիդրոբրոմիդ), էֆեդրին ( էֆեդրինի հիդրոքլորիդ) glaucine (glaucine hydrobromide), ephedrine (ephedrine hydrochloride)օշարակ4,6մգ/5մլ+ 5,75մգ/5մլ, 125մլ ապակե կամ պլաստիկե շշիկ և չափիչ բաժակ | հատ | 530 | 21200 | 40 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 39 | 33691176/509 | Գլիցերին | Նիժֆարմ ԲԸ | գլիցերոլ glycerol մոմիկներ ուղիղաղիքային2.11գ,(10/2x5/) | հատ | 139,6 | 4188 | 30 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 40 | 33691176/510 | Գլիցերին | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | գլիցերոլ glycerol մոմիկներ ուղիղաղիքային1000մգ(10/2x5/) | հատ | 99 | 4950 | 50 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 42 | 33691138/501 | Գլյուկոզա | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ՓԲԸ | դեքստրոզ dextrose լուծույթ ներարկման400մգ/5մլ, 5մլ ամպուլներ (10) | հատ | 41,6 | 33440 | 800 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | | |
| 44 | 33691212/501 | Տուրբո միկրոն Ձի | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ | դիոսմին, հեսպերիդին diosmin, hesperidin450մգ+50մգ, բլիստերում | հատ | 78 | 109200 | 1400 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 45 | 33661153/501 | դեքսամեթազոն | Լեկխիմ-Խարկով ԲԸ | դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ)dexamethasone (dexamethasone sodium phosphate)լուծույթ ներարկման4մգ/մլ, 1մլ ամպուլներ (5), 1մլ ամպուլներ, բլիստերում (5/1x5/) | հատ | 44 | 88000 | 2000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 46 | 33631430/501 | Դեքսասոոմ | Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ. | դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ)dexketoprofen (dexketoprofen trometamol)լուծույթ ն/ե և մ/մ ներարկման25մգ/մլ, 2մլ ամպուլներ (5/1x5/) և 2մլ ամպուլներ, բլիստերում(10/2x5/) | հատ | 457 | 594100 | 1300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 48 | 33621440/501 | Դիբազոլ | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ | բենդազոլ bendazol լուծույթ մ/մ ներարկման 10մգ/մլ, 5մլ ամպուլներ(10) | հատ | 39 | 39000 | 1000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | բժշկական կենտրոն» ՓԲԸ | | |
| 51 | 33631310/501 | Դիկլոն | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)մոմիկներ ուղիղաղիքային 12,5մգ(10/2x5/) | հատ | 107 | 16050 | 150 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 52 | 33631310/502 | դիկլոֆենակ | Հեմոֆարմ Ա.Դ. | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium)լուծույթ մ/մ ներարկման25մգ/մլ,3մլ ամպուլներ(5) | հատ | 68 | 238000 | 3500 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 53 | 33671130/501 | Դիմեդրոլ | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)լուծույթ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10) | հատ | 22 | 154000 | 7000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 55 | 33641310/501 | Դյուֆաստոն | ԱԲԲՈՏՏ Բիոլոգիկալս Բ.Վ. | դիդրոգեստերոն dydrogesteroneդեղահատեր թաղանթապատ10մգ,բլիստերում (20/1x20/) | հատ | 228 | 13680 | 60 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 58 | 33651141/501 | Վակունիս | Անֆարմ Հելլաս Ա.Ա. | ցեֆուրոքսիմ (ցեֆուրոքսիմ նատրիում)դեղափոշի ներարկման/կաթիլաներարկման | հատ | 740 | 740000 | 1000 | Մատակարարումն իրականացվում է | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լուծույթի750մգ. 10մլ ապակե սրվակ (1) | | | | | մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | | |
| 59 | 33691176/513 | Էնտերոլ | Բիոկոդեքս,1 ավենյու Բլեզ Պասկալ,60000 Բեուվեյս | սակխարոմիցես բուլարդի լիոֆիլացված բջիջներlyophilized cells of saccharomyces boulardiiդեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի250մգ. փաթեթիկներ (10) | հատ | 273,6 | 27360 | 100 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 60 | 33691176/514 | Էնտերոլ | Բիոկոդեքս,1 ավենյու Բլեզ Պասկալ,60000 Բեուվեյս | սակխարոմիցես բուլարդի լիոֆիլացված բջիջներ lyophilized cells of saccharomyces boulardiiդեղապատիճներ250մգ. ապակե շշիկում (10) | հատ | 254,72 | 76416 | 300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 61 | 33691176/556 | էսկարդ | Էսկուլապ | Կատվախոտի ոգեթուրմ , այրուծաղի ոգեթուրմ , պղձի ոգեթուրմ 30մլ | հատ | 221,6 | 13296 | 60 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 62 | 33691176/515 | Էսպումիզան | Բեռլին-Քեմի ԱԳ | սիմետիկոնsimeticoneդեղապատիճներ փափուկ40մգ,բլիստերում (25/1x25/) | հատ | 30,3 | 30300 | 1000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | | |
| 63 | 33691176/516 | Էրինիտ | Թաքքիմֆարմպրեպարատի ԲԸ | պենտաէրիթրիտիլի տետրանիտրատ pentaerithrityl tetranitrateդեղահատեր10մգ; (50/5x10/), բլիստերում | հատ | 22,93 | 57325 | 2500 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 65 | 33611370/501 | Թիամին | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճա | թիամին (թիամինի քլորիդ) thiamine (thiamine chloride)լուծույթ մ/մ ներարկման50մգ/մլ, 1մլ ամպուլներ(10) | հատ | 19,4 | 5820 | 300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 66 | 33661113/501 | Թիոպենտալ | Կինմեդպրեպա-րատ ՀԲԸ | թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի500մգ, ապակե սրվակ (40) ¶ | հատ | 1935,2 | 193520 | 100 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 67 | 33661113/502 | Թիոպենտալ | Կինմեդպրեպա-րատ ՀԲԸ | թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի1000մգ, ապակե սրվակ (40) | հատ | 2340 | 163800 | 70 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 69 | 33631290/502 | Իբուֆեն | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, | իբուպրոֆեն ibuprofenդեղակախույթ ներքին | հատ | 798 | 19950 | 25 | Մատակարարումն | Ըստ պատվիրատու | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդունման20մգ/մլ, 100մլ ապակե 22հկ և չափիչ բաժակ | | | | | իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | ուի պահանջի | |
| 71 | 33661116/501 | Լիդոկային | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)lidocaine (lidocaine hydrochloride)լուծույթ ներարկման10մգ/մլ, 20մլ ապակե սրվակներ(1, 10) | հատ | 527,72 | **94989,6** | **180** | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 72 | 33661116/502 | Լիդոկային | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ | լիդոկային lidocaineցողացիր4,8մգ/դեղաչափ, 38գ ապակե տարայում 50մլ, դեղաչափիչ մխոցով | հատ | 3030 | **15150** | **5** | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 73 | 33661116/503 | Լիդոկային | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, | լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)lidocaine (lidocaine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ,2մլ ամպուլներ(10) | հատ | 26 | **7800** | **300** | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 77 | 33651168/511 | Կանամիցին | Կիմեդպրեպարատ ԲԲԸ | կանամիցին (կանամիցինի սուլֆատ) kanamycin (kanamycin sulfate)դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի1000մգ, ապակե սրվակ (1) | հատ | 202,4 | **10120** | **50** | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | | |
| 78 | 33621510/511 | կապտոպրիլ 25 մգ | "Քրիստոֆյան բուժպատրաստուկների գործարան "ՔԲԸ | կապտոպրիլcaptoprilդեղահատեր25մգ. բլիստերում(40/4x10/) | հատ | 3,7 | 8880 | 2400 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 82 | 33631300/511 | Կետոպրոֆեն | Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ. | կետոպրոֆենketoprofenլուծույթ մ/ե և մ/մ ներարկման50մգ/մլ,2մլ ամպուլներբլիստերում (5/1x5/, 10/2x5/) | հատ | 200 | 200000 | 1000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 83 | 33691176/528 | Կետոտիֆեն | Բելմեդպրեպարատի ՀՈԻՁ | կետոտիֆեն (կետոտիֆենի ֆումարատ)ketotifen (ketotifen fumarate)դեղահատեր1մգ.բլիստերում (10/1x10/, 30/3x10/) | հատ | 6,4 | 1920 | 300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 85 | 33691176/529 | Կոկարբոքսիլազա | "ԲԻՈՖԱՐՄԱ" "ՊԳ" ՍՊԸ | կոկարբոքսիլազ (կոկարբոքսիլազի հիդրոքլորիդ) cocarboxylase (cocarboxylase hydrochloride)դեղափոշի լիոֆիլիզացված, ներարկման լուծույթի50մգ,ապակե սրվակ, բլիստերում (10/2x5/),ապակե սրվակ (10/1x10//(5)+2մլ լուծիչ ամպուլում/(5)), բլիստերում, ապակե սրվակ (20/2x10//(10)+2մլ լուծիչ ամպուլում/(10)) բլիստերում | հատ | 165 | 1650 | 10 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 88 | 33621390/502 | Արիտմիլ | Էս Այ Մի "Բորշչագովյան քիմիադեղագործա-կան գործարան" ՀԲԸ | ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) դեղահատեր 200մգ №20 բլիստերում | հատ | 48 | 7200 | 150 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 89 | 33621330/501 | Կորդիամին | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ | նիկեթամիդ nikethamideլուծույթ ներարկման250մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում(10, 10/2x5/) | հատ | 121 | 36300 | 300 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 90 | 33691176/530 | Կորվալոլ | Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ | էթիլբրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ ethylbromizovalerianat, phenobarbital, oleum menthae piperitaeկաթիլներ ներքին ընդունման20մգ/մլ+ 18,26մգ/մլ+ 1,42մգ/մլ,25մլ ապակե 22հկ | հատ | 168 | 11760 | 70 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 91 | 33621340/501 | Կոֆեին-նատրիումի բենզոատ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ | կոֆեին նատրիումի բենզոատcaffeine-sodium benzoateլուծույթ ներարկման200մգ/մլ,1մլ ամպուլներ(10) | հատ | 39 | 78000 | 2000 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21 հասցեով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 102 | 33611110/501 | Մաալոքս | Սանոֆի-Ավենտիս Ս.պ.Ա | ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդaluminium hydroxide, magnesium | հատ | 37,4 | 7480 | 200 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Scanned with CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | hydroxide[illegible] [illegible] 400մգ+400մգ, [illegible] (40մլx10) | | | | | [illegible] | | |

[illegible]

[illegible]

**ԳՆՈՐԴ**

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
/0264/ 2-33-53
««Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ»» ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
220085140329000
08417304
Տնօրեն ՝ Ա. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նատալի ֆարմ>>
ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցե՝ nataliparm@bk.ru
Հեռ. (010)744212
գլխավոր տնօրեն Ա. Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Scanned with CamScanner